



# ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՄ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՍՏԱՆԱՍ

# 1 + 1



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅԻ ԹԵՐԹ 27 ՀՈՒՆԻՍԻ 2020 թ. թիվ 7 (17)

## ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառ կամ Վարդեվառ, որպես քրիստոնեական տաղավար տոնը Քրիստոսի այլակերպություն կամ Քրիստոսի պայծառակերպություն, հայ ժողովրդական նախաքրիստոնեական և քրիստոնեական տոն, ըստ եկեղեցական տոնացույցի նշվում է Չատիկից 14 շաբաթ կամ 98 օր հետո, կիրակի օրը հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Վարդավառը, կամ Քրիստոսի Պայծառակերպությունը, Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից է:

Հայաստանի շատ բնակավայրերում, սակայն տեղական ավանդույթի համաձայն, Վարդավառը նշվում է այլ օրերի հուլիսի կեսերից մինչև օգոստոսի սկիզբը: Որպես օրինակ՝ Տավուշում, Լոռիում այս տոնը նշվում է հուլիսի 20-ին հաջորդող կիրակի օրը:

Վարդավառը հայկական ավանդական տոների շարքում ամենասիրելիներից մեկն է, ամառային ամենասիրված տոնը: Քաղաքներում Վարդավառն ավելի շատ համարվում է մանկական տոն, երեխաները հենց այդպես էլ ասում են «ջրոցի խաղալ» կամ «Վարդավառ խաղալ», այսինքն ուրախ ջրել անձանոթներին և անցորդներին:

Վարդավառ տարբեր բնակավայրերում ուներ անվանման տարբեր տարբերակներ՝ պայմանավորված հայերենի բարբառային առանձնահատկություններով, ինչպես նաև տոնի գլխավոր ուխտավայրերի ու առավել տարածված բաղադրիչների գերակա անվանումներով: Այդ անվան տարբերակներից են Վարդավառ (Արձակ), Վարդևոր (Լոռի, Ջավախք, Հարք-Բուլանխ, Կաղզվան), Վարդիվոր (Դերսիմ), Վառթիվոր (Չնաբերդ), Վրթիվոր կամ Վրթեվոր (Արցախ-Վարանդա), Վարթևոր (Նոր Նախիջևան), Վարթիվոր, Երճանքի օր (Շաղաթ), Երճան (Մարտիրոս-Վայոց Ձոր), Վրթիվոր (Այգեհովիտ-Տավուշ), Վրդիվոր (Մեղրի), Վարդավար, Վարդեվոր կամ Վարդիվոր (Մոսալեռ), Վարթիվոր (Դզլար), Պալլան, Պարլում կամ Պարլամոն (Քեսապ) և այլն:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով, վարդավառ բառը ծագել է «վարդ» արմատից և կապված է Աստղիկ դիցուհու պաշտամունքի հետ: Ըստ Գրիգոր Ղափանցյանի, վարդավառը խեթերեն բառակազմություն է կազմված «vadar» (ջուր) և «arr» (լվանալ ցնցղել իմաստով) բառերից:

Որոշ հեղինակներ վարդավառ բառը համարում էին, որ թարգմանաբար նշանակում «ջուր», իսկ մյուս հատվածը՝ «ավար» հայերեն է «թափել», «ցայտել» («վայրել» բառարմատից) իմաստով: Ֆնգյանի կարծիքով վարդավառ նշանակում է «ջրի ուղի» և կապված է Անահիտ աստվածուհու հետ: Հունական միջավայրում տոնը ստուգաբանվել է վարդ-ծաղիկ համատեքստում: Հունարենում «ռոդոն» վարդ է նշանակում, դրանից Ռոդիզմոսը աստվածուհու անունն էր, որի ժամանակ գերեզմանները զարդարվում էին վարդերով, Անթիզմոսը՝ անթոս ծաղիկ) բառից ծաղկում, Անթիփորիա (բառացի ծաղկաբերություն, Pascha rosarum (լատիներեն Վարդերի Չատիկ), Վարտովարիա (Վարդավառ՝ հոգնակի): Պավլոս Կարոլիդիսը (1849-1930) օրինակ, տոնն անվանել է Վարդերի Չատիկ:

Վարդավառը ծագամբ հեթանոսական տոն է, որը, ըստ հայագիտության մեջ եղած տեսակետների, կապված էր Աստղիկ և Անահիտ աստվածուհիների պաշտամունքի, Ամանոր-Նավասարդի հետ: Վաղնջական ժամանակներից հուլիս ամսին, դաշտային հիմնական աշխատանքներն ավարտելուց և հացահատիկը հավաքելուց հետո ընդունված սովորություն էր մեծ տոնախմբություն



աղերսվող ծեսերն ունեցել են անձրև խնդրելու, հնարավոր երաշտը կանխելու նշանակություն: Ընդհանրացված սովորույթ էր, որ մինչև Վարդավառ խնձոր չուտեին. տարվա առաջին խնձորը ուտում էին Վարդավառին, ինչպես առաջին խաղողը ուտում էին Խաղողօրհնների տոնին: Որոշ վայրերում առաջին խնձորը վայելելը ուղեկցվում էր հատուկ նախապատրաստություններով, ինչպես Շատախում, որտեղ երիտասարդները Վարդավառի շաբաթ երեկոյան դեզեր էին շինում և մութ ընկնելուն պես սկսում հերթով վառել այդ դեզերը մինչև լուսաբաց բոլորելով կրակի շուրջ, որոնց մեջ խորովվում էին ուտելի առաջին խնձորները: Լուսաբացից առաջ վառում էին ամենամեծ դեզը, որի շուրջ սկսվում էին տղաների ու աղջիկների խմբապարտեր ազդարարելով տոնի սկիզբը:

Վարդավառը նաև բերքահավաքի հետ կապվող առաջին տոներից էր, որի ծեսերը մասամբ նվիրված էին բերք ու բարին ապահովող աստվածություններին՝ տա-

րերներին:

Վարդավառը ուխտագնացությունների տոն էր, ուխտագնացությունների համար ընտրվում էին գլխավորապես լեռները, ջրերի ակունքները: Վարդավառը ուներ տոնահանդեսի արարողակարգի հաջորդականություն, որ որոշակի հստակեցում էր մտցնում հանդիսությունների շրթայում: Տոնին բնորոշ ծեսերը ընդհանրական էին, որ ըստ դրանց ամենուր տոնը բնորոշվում էր. այդպիսիք էին, օրինակ, միմյանց վրա ծուր ցողելու, աղավիհներ թռցնելու, միմյանց ծաղիկներ նվիրելու, եկեղեցի հասկեր տանելու և օրհնել տալու սովորությունները, ուխտագնացությունները, զոհաբերությունները, գիշերային հանդեսները և այլն:

Երիտասարդական ակունքների դաշնության (FYCA) կողմից 2014 թվականից սկսված ամեն տարի կազմակերպվում է Վարդավառ միջազգային փառատոնը, որի նպատակը երիտասարդությանն ու հանրությանը Վարդավառի ծիսակատարությունների ներկայացումն է, ազգային-ավանդական մշակույթի հանրահռչակումը Հայաստանում և երկրի սահմաններից դուրս: Տոնակատարությունն իր մեջ ներառում է Վարդավառ միջազգային փառատոնի համար պատրաստված գաթայի և գինու հյուրասիրությունը, ազգային երգ ու պար, Վարդավառ տոնի թեմատիկ տաղավարներ, որոնք ներկայացնում են Հայաստանի տարբեր մարզերի ավանդույթները ու ձեռագործ աշխատանքները, Վարդավառի շուրջապար և հին հայկական խաղեր:

Փառատոնին առաջկցում են Համաշխարհային հայկական երիտասարդական Ոստայնը (WostAYN), Հայկական Փի Ար ասոցիացիան գիտատեղեկատվական հասարակական կազմակերպությունը և այլ կազմակերպություններ:

Վերջին հարյուրամյակի ընթացքում Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում կայունացել է Վարդավառը հուլիսի 22-ին հաջորդող կիրակի օրը նշելու ավանդույթը: Այդ օրը, ըստ տեղյան, լավագույնս համապատասխանում է տոնի բովանդակային սկզբունքին, գյուղացու դաշտային աշխատանքները հիմնականում ավարտված են լինում և լիովին իմաստավորվում է հասկերը եկեղեցում կամ գառը ուխտավայրերում զոհաբերելու սովորույթը: Վարդեմիսի բոլոր գյուղերի բնակիչները ջանում են այդ օրը ուխտի գնալ Կարճաղբյուր գյուղի հնագույն ուխտատեղին՝ Դաշ Կափում:

# ԻՆՉ Է ԿՈՒՆՏՈՒՐԱՆ



սերնդից մյուսին այն ինֆորմացիան, որը ունեցել է մարդը: Նա փոխանցվում է բանավոր խոսքով, հուշարձաններով, գրականությամբ, գիտակցությամբ, փիլիսոփայությամբ, հավատքով և այլն:

Կուլտուրան այն յուրահատուկ էկոլոգիական միջավայրն է տվյալ հասարակության համար, այն մթնոլորտն է, որը մարդիկ ստեղծում են իրենց շուրջ, որպեսզի կարողանան լիարժեք ապրեն և զարգանան: Երբ մենք առավել տյան արթնանում ենք, լսում ենք քաղրի կանչը կամ ծիտիկների ծվլոցը, վազվում ենք, հաց ենք ուտում /հիմա մանրամասները/. Երբ արթնանում ենք, հավաքում ենք անկողինը. դա կուլտուրա է, վազվեցիր կամ լոգանք ընդունեցիր, շուրջքոլորդ քրջվեց, պետք է մաքրես, հաց ուտելուց հետո հացը ծածկիր, սեղանը մաքրիր, ուտելիքը սառնարանը դիր, դա կուլտուրա է: Քանի որ ամառ է և համաճարակ, շրջի որ դաշտերով, երբ ճանապարհին տեսնում են թուղթ, սիգարետի տուփ կամ շիշ է գցած,

դա կուլտուրա՞ է: Եթե տեսնում ես անցորդների, պետք է բարևես, թեկուզև չես ճանաչում. նրանք քո գյուղում են ապրում. դա կուլտուրա է: Դաշտում տեսնում ես գյուղացու, որը իբր արածեցնում է մի մոզի, որը հագիվ է ոտքի վրա կանգնում, և նրա կողոկերը կարելի է հաշվել. դա կուլտուրա՞ է. ցանկացած աշխատանք պետք է լինի որակյալ: Հագար ու մի երագանքով մտնում են մեր գյուղի վանքը մոմ վառելու, դռները բաց են, քամուց փոշու հատիկները պարում են ներսում, ավելը սեղանի վրա է, դատարկ շշերը գետնին գցած. դա կուլտուրա՞ է: Ման եկա հայրենի դաշտերով, հիացա արևով ու պայծառ բնության գեղեցկությամբ, հավաքեցի ծաղիկներ ու որոշեցի տուն գնալ, մտա տուն, ուրախ տրամադրությամբ տատիս նվիրեցի ծաղիկները և ասացի, որ իր համար է. դա կուլտուրա է: Մենք բոլորս ճաշեցինք, ես օգնեցի հավաքել սեղանը, վազել ամանները և սեղանին մնացած հացի փշուրները հավաքելով տվեցի հավերին, դա կուլտուրա է: Տնային գործերում ես միշտ օգնում եմ մայրիկիս և տատիկիս՝ հավաքում եմ, մաքրում, ջրում ծաղիկները, իսկ տղաները օգնում են իրենց հայրիկներին և պապիկներին գյուղատնտեսության մեջ. օրինակ՝ մանրակրկիտ ուսումնասիրում են թունաքիմի-

կատների բաղադրությունը, օգտագործման ձևը և անվտանգության կանոնները, որպեսզի կարողանան սրսկված ժամանակ չվնասվեն բույսերը, իսկ իրենք չթունավորվեն. դա կուլտուրա է: Երեկոյան երբ նախիրը դաշտից տուն է վերադառնում, հայրս մաքրում է կովի վրա հավաքված միջատները, կարծես դրանով շնորհակալություն է հայտնում, որ նա մեզ կաթ է տալիս. դա կուլտուրա է:

Երբ երեկոյան ընտանիքով հավաքվում ենք հեռուստացույց դիտելու, իսկ տատիկս հնդկական սերիալների սիրահար է, նրան չնեղացնելու համար ես այդ ժամին գիրք եմ կարդում. դա կուլտուրա է:

Երբ պառկում ենք քնելու, շորերը չպետք է շարտել ամբողջ սենյակով մեկ. դա կուլտուրա է:

Երբ օրը ավարտվում է, և մտովի ամփոփում ես այն, զգում ես, որ հոգիդ խաղաղ է, և դու քեզ պիտանի ես կես զգում մայրիկին օգնելով, վանքի ներսը հավաքելով, ծեր տատին դաշտային ծաղկեփնջով ժպիտ պարզելով, անծանոթ մարդկանց բարևելով, մի քանի էջ գրքից կարդալով, դա նշանակում է, որ դու այն մարդն ես, որ առաջ պիտի տանես հազարամյակներից եկած կուլտուրան, արդիականացնես ու մատուցես աշխարհին:

«1+1» թերթի խմբագրություն

Կուլտուրայի տարածումը կատարվում է տեխնիկական միջոցներով և սոցիալական ինստիտուտներով. մասսայական լրատվական միջոցներով, գիտության, արվեստի որպես սոցիալական ինստիտուտ, կրթության, ընտանիքի, հասարակական կազմակերպությունների, պետության միջոցով: Յուրաքանչյուր հասարակության մեջ կարելի է առանձնացնել բարձր /էլիտար/ և ազգային կուլտուրա, բացի դրացնից, գոյություն ունի մասսայական կուլտուրա՝ պարզեցված և մտայնական, գեղարվեստական առուններով հասկանալի բոլորի համար: Կուլտուրայի հիմնական ֆունկցիան հարթելն է ու փոխանցելը մի

դիկ ստեղծում են իրենց շուրջ, որպեսզի կարողանան լիարժեք ապրեն և զարգանան: Երբ մենք առավել տյան արթնանում ենք, լսում ենք քաղրի կանչը կամ ծիտիկների ծվլոցը, վազվում ենք, հաց ենք ուտում /հիմա մանրամասները/. Երբ արթնանում ենք, հավաքում ենք անկողինը. դա կուլտուրա է, վազվեցիր կամ լոգանք ընդունեցիր, շուրջքոլորդ քրջվեց, պետք է մաքրես, հաց ուտելուց հետո հացը ծածկիր, սեղանը մաքրիր, ուտելիքը սառնարանը դիր, դա կուլտուրա է: Քանի որ ամառ է և համաճարակ, շրջի որ դաշտերով, երբ ճանապարհին տեսնում են թուղթ, սիգարետի տուփ կամ շիշ է գցած,

## ՎԵՐՋԱՑՐԵՔ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐ ՓՏՆԵԼԸ

## Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ



կատարեց հեղաշրջում: **Հենրի Ֆորդ.** չկարողացավ ֆերմայում կազմակերպել աշխատանքը, և նրան չվստահեցին նույնիսկ մեխանիկի օգնականի պաշտոն. չորս անգամ սնանկացավ: Մինևույն է, նա կատարելագործեց մեքենայի մասսայական արտադրությունը:

**Վինսենթ Վան Գոգ.** ամբողջ կյանքի ընթացքում միայն կարողացավ վաճառել մեկ նկար՝ 50 դոլարով: Նա նկարել է 900 և ավելի գլուխգործոցներ, որոնցից 7-ը արժեն 1 միլիարդ դոլար:

Ազատվեք արդարացումներից. նշանակում է վերցրեք ձեզ վրա պատասխանատվություն ձեր կյանքի բոլոր բնագավառներում և ստեղծեք ապագա, որով կարելի լինի հպարտանալ:

.Ոչինչ, որ առաջ դա ոչ մեկը չի արել, դարձեք առաջինը:

.Ոչինչ, որ ձեզ մոտ մի քանի փորձ ձախողվել է, վերլուծե՛ք ձեր մոտեցումը:

.Ոչինչ, որ դուք չունեք բարձրագույն կրթություն, եղե՛ք հետաքրքրասեր և զբաղվե՛ք ինքնակրթությամբ:

.Ոչինչ, որ ձեզ չեն հավատում, ձեզ պետք է հավանություն, որ դուք հասնեք ձեր ուզածին:

.Ոչինչ, որ կլինեն դժվարություններ, մեծ հաջողությունը գալիս է քրտնաջան աշխատանքով, ցավով և կորուստով:

.Ոչինչ, որ դուք փորձում եք, բայց ձեզ մոտ դեռ չի ստացվում, եղե՛ք խիզախ և կայացրե՛ք ճիշտ որոշումներ:

.Ոչինչ, որ մարդիկ ձեր հետևից չեն գալիս, նրանք կգան, երբ դուք արժեքավոր բաներ անեք:

.Ոչինչ, որ դուք նորից կտուժեք՝ քաջության գինն է դա:

.Ոչինչ, որ փորձագետները ձեզ հետ համախոս չեն. նրանք կարող են սխալվել:

Թափանցե՛ք ձեր հոգու խորքը և կռվե՛ք չարի դեմ, որոնք չեն թողնում ձեզ հասնել հաջողության:

Դուք չեք դառնա հաղթող, մինչև չսովորեք անտեսել վախը, հաջողությունը, որը ձեզ խանգարում է, դուք պետք է հավատաք, որ կարող եք դառնալ հրաշալի մասնագետ կյանքի՝ ձեր ընտած ոլորտում:

«1+1» թերթի խմբագրություն

/Մարկոսյաններ/ Մարկոսը եկել է Արևմտյան Հայաստանից 1860թ. և բնակություն հաստատել Սարուխան գյուղում: Մարկոսը ունեցել է մեկ որդի՝ Ավետիսը: Ավետիսը ունեցել է երեք որդի՝ Բալաբեկը, Աղաբեկը և Գեղամը: Բալաբեկը 1927թ. տեղափոխվում է և բնակություն հաստատում Բաշքյանի ներկայիս Գեղարքունիք գյուղում: Բալաբեկը ունենում է վեց որդի՝ Խաչատուրը, Հայկազը, Մուշեղը, Ավետիքը, Վարազդատը, Հրաչը: Խաչատուրը ունենում է երեք որդի՝ Վանիկ, Սաշիկ և Վարդան: Վանիկը ունենում է երկու որդի՝ Ռազմիկ, Հրանտ: Սաշիկը որդի չի ունենում: Վարդանը ունենում է մեկ որդի՝ Խաչատուրը:

Հայկազ ունենում է երեք որդի՝ Գառնիկը, Գեղամը և Գարիկը: Գառնիկը ունենում է երկու որդի՝ Կարենը և Հայկը: Կարենը ունենում է մեկ որդի՝ Գառնիկը: Հայկը ունենում է մեկ որդի՝ Ավետը: Գեղամը որդի չի ունենում: Գարիկը ունենում է մեկ որդի՝ Ավետիսը:

Մուշեղը ունենում է չորս որդի՝ Անդրանիկ, Արմենակ, Գագո, Գարուշ: Անդրանիկը ունենում է երկու որդի՝ Յովիկը, Հարություն: Արմենակը ունենում է մեկ որդի՝ Վահեն: Վահեն ունենում է մեկ որդի՝ Արմենակը: Գագո ունենում է երկու որդի՝ Մուշեղ, Տիգրան: Տիգրանը ունենում է մեկ որդի՝ Գագիկը: Գարուշը որդի չի ունեցել:

Ավետիքը ունենում է մեկ որդի՝ Սամվելը: Սամվելը որդի չի ունեցել: Վարազդատը ունենում է երեք որդի՝ Ալբերտ, Ռուբեն, Ներսես:

Հրաչը ունեցել է երեք որդի՝ Ռաֆիկ, Վարդան և Ժիրայր: Ռաֆիկը ունենում է երկու որդի՝ Սարոն և Սևակը: Վարդանը ունենում է երկու որդի՝ Արտաշը և Մուշեղը: Ժիրայրը ունենում է մեկ որդի՝ Հրաչը:

Նրանք կրում են Մարկոսյան ազգանունը:



Արփինե Մխիթարյան

Կարևոր է միայն այն, ինչ դուք անում եք, ինչ էլ դա լինի, փոքր գործեր, թե խոշոր, նույնիսկ՝ անհաջողությունները:

Կարևոր է, որ դուք իզուր վատնում եք ժամանակը, մեղավոր եք ճանաչում ուրիշներին, դրա համար մեկ-մեկ ծուլանում եք: Դա կարևոր է, եթե ուզում եք հասնել ձեր նպատակին, իսկ այդ ճանապարհին տեղ չունի արդարացումը: Այդ ճանապարհը անցել են բոլոր ճանաչված մարդիկ, ովքեր փոխել են աշխարհը:

**Ձիգմունդ Ֆրեյդ.** ծիծաղեցին և սուլեցին, երբ նա բեմում կարդում էր իր թերիան /տեսությունը/ գիտնականների համար, բայց նա շարունակեց աշխատել և արժանացավ / Գյոթեյի/ մրցանակին հոգեբանության ոլորտում:

**Ուինստոն Չերչիլ.** 20-րդ դարի նշանավոր առաջնորդներից մեկը, ով դարձավ վարչապետ 65 տարեկանում, չնայած պարտվել էր ընտրություններում: Թագավորը նշանակեց նրան այդ պաշտոնին, երբ նախորդ վարչապետը ստացավ իր անվստահության քվեն:

**Ալբերտ Էյնշտեյն.** մինչև 4 տարեկան չէր խոսում, մինչև 7 տարեկան չէր կարողանում կարդալ: Դպրոցից հեռացրել էին նրան վատ սովորելու համար, բայց հետագայում նրա «Հարաբերականության տեսությունը» ֆիզիկայի բնագավառում

2

# ԱՆՅՅԱԼ, ԹԵ՛ ԼԵՐԿԱ

Երազում են գոնե մի անգամ նստել իմ երևակայությունից շինված գնացքն ու մեկնել 19-րդ դար: Մի ժամանակաշրջան, որտեղ, ըստ իմ դիտած ֆիլմերի ու կարդացած գրքերի, կանայք հագնում էին երկար և լայնափեշ շրջագետս, կրում էին կնոջը բնութագրող արքեստուարներ, իսկ տղամարդիկ տղամարդուն վայել բաճկոններ ու կրում էին խորհրդավոր գլխարկ:



Մի ժամանակաշրջան, որտեղ համացանցն ու հեռախոս ամենայն հավանականությամբ չկային, իսկ եթե կար, ապա այն ոչ թե օրվա մի մասը կազմող բջիջն էր հանդիսանում, այլ պարզապես հաղորդակցվելու միջոց էր:

Երբ մարդիկ միմյանց նամակներ էին գրում հասարակ, գուցե և աննշակ կաթնասուկե գույն թղթի վրա:

Դա այն երևույթն էր, երբ ձեռագրի միջոցով կարելի էր խոսել միմյանց հետ, այդ հասարակ, բայց ամեն ինչ ասող թղթի կտորով արտահայտել քո ներքին հուզմունքն ու էնոցիոնալ ապրումները: Երբ քեզ հասցեագրված նամակով կարելի էր հասկանալ մարդու գրագիտության աստիճանն ու վերաբերմունքը:

Ու կարելի էր այդ նամակի խոնավության աստիճանից ենթադրել, որ քեզ համար գրված նամակը արտասովոր էր գրել, կամ ձեռագրի շեղվածությունից որոշել, որ այն գրված էր գուցե վախով կամ տագնապով...:

Քեզ հասցեագրված նամակին սպասել, սպասել ժամերով, օրերով, հաշվել, թե փոստատարը քանի րոպեից կհասնի, գուցե այնքան, մինչև որ սուրճը սառչի, ու երբ ձեռքդ առնես նամակը, գուցե ապրումներդ թույլ չտան սուրճը վերջացնել...:

Մի երևույթ, որի դեպքում սպասումը գեղեցիկ է դառնում:

Գուցե քո նամակն այնքան արժեքավոր լիներ, որ այն դնեիր հուշերիդ տուփի մեջ... Գուցե և այդ տուփը երբեք չբացեիր: Գուցե խռովությունից այրեիր նամակն ու մոխիրը քանոն տայիր... Վերադառնալով մեր ժամանակները, կասեմ, որ դա իսկապես ամենահաճելի զգացողությունը կլիներ, երևակայի՞ր, խնդրում են...

Իսկ մեր իրականության մեջ նամակները, որոնք գրվում են քեզ որպես SMS... Ինչքան անհետաքրքիր ու անբովանդակ նա-

մակներ ենք ստանում, տառախալներով, շատ հաճախ էլ բառասխալներով ու գրեթե միշտ անպատասխան:

Այնպես կուզեի հայտնվել 20-րդ դարի պարահանդեսներում, երբ այդ խորախորհուրդ ու հսկայական դահլիճում հավաքված պարուհիների ու լեդիների համար հնչում էին ամենախորհրդավոր դասական մեղեդիներն, ու դրանց հմայքի տակ պարում էին ամենագեղեցիկ օրիորդները, վերջիններիս գեղեցկության հիմքում մի քանի շերտերից բաղկացած դիմադարձները: Եվ իհարկե, թիկնեղ տղամարդիկ...

Այդ դարի պարահանդեսներում ամեն ինչ արտակարգ էր, ու ինչ-որ խորհուրդ կար դրանցում, իսկ հիմա ամեն ինչ սահմանափակվում է համացանցային հարթակում ուղիղ եթերներ անելով:

Եվ իհարկե, կուզեմայի հայտնվել մի ժամանակաշրջան կամ այդ ժամանակաշրջանը տեղափոխել 21-րդ դար, որտեղ կային ամենաիսկական արքայադուստրեր ու արքայազներ սպիտակ ձիով, այլ ոչ թե սպիտակ Niva –ով:

Եվ որքան շեղաշուք են դիտածս ֆիլմերի, կառքերի վրա նստած օրիորդներն ու պարուհիները: Ամեն անգամ նմանատիպ ֆիլմեր դիտելիս մի ակնթարթ հայտնվում են նրանց ընթրիքի սեղանին, նրանց պարահանդեսներում... Մի պահ փակվում են աչքերս, ու ֆիլմը մնում է կիսատ... Ու արթնանում են 21-րդ դարի մեր իրականությունում....

Բարի լույս...

# ՀԱՋՈՂԱԿ ԼԻՆԵՆՈՒ ԲԱՆԱԶԼԸ

Յուրաքանչյուր ոք ձգտում է լինել հաջողակ իր մասնագիտական ոլորտում: Անկախ այն բանից, թե որ ոլորտում են դրսևորվում քո առաջադիմությունները, պետք է համառ լինես ու գնաս մինչև վերջ: Ենթադրենք՝ աշխատանք ես որոնում օնլայն հարթակում, դա քո մտահաղացումն է, և քեզ հարկավոր են բիզնես գովազդներ այլ ընկերությունների կողմից, բայց՝

1.Ունանք քննադատում են քեզ ու թերահավատորեն են մոտենում քո քայլերին:

2.Ունանք ամեն կերպ փորձում են քեզ ծաղրի առարկա դարձնել և քեզ հիասթափեցնել:

3.Դու բավականին խոցելի ու զգացմունքային ես, և հասարակության կարծիքը մեծ նշանակություն ունի քո գործողություններում:

4.Մարդկանց կարծիքներն էլ ազդեցություն ունեն քո հետագա քայլերի վրա:

5.Եվ մի՛ կառչիր հասարակության կարծիքից: Հասարակական կարծիքը պետք է լինի երկրորդական, երրորդական, սակայն ոչ երբեք առաջնային:

Այսինքն՝ պետք չէ թքած ունենալ շրջապատի վրա, սակայն երբեք չառաջնորդվել դրանով:

Մի՛ ընկիր հուսահատության գիրկը, չէ որ դու քո "երազանքների գրկում ես":

Մի՛ նահանջիր, երբ որևէ անհիմն քննադատություն ես լսում քո հասցեին: Չէ որ առանց քննադատությունների ու բացասական կարծիքների չես կարող գործել, քանզի որոշ դեպքերում դրանք լավագույն մոտիվացիան են դառնում քեզ համար: Իսկ դրանցից փախչելու միակ միջոցը ձեռքերը ծալել ու ոչնչով չզբաղվելն է:

Լսի՛ր բոլորի կարծիքներն ու խորհուրդները, այնուհետև ծաղկաբաղ արա՛ ու ընտրի՛ր կարևորները: Իսկ եթե չկա որևէ կարևոր ու մոտիվացնող կարծիք /խորհուրդ/, ապա դրանք աղբամանը զգի՛ր ու քայլի՛ր առաջ:

Գուցե կտորվում ես ամեն անգամ, ինչպես զարման առաջին ծաղկի ցողունը: Գուցե ընկնում ես ամեն չնչին հարվածից: Ուրքի՛ կանգնիր. հակահարված մի՛ տուր, այլ գործի՛ր... Չէ որ լավագույն հակահարվածն այն բանի ապացուցումն է, որ դու կարողացար:

Երբեմն այդ հարվածները կոփում են մեզ հետագա ճանապարհներն անցնելու համար:

Մի՛ փորձիր բոլորին դուր գալ, այդ քայլով դու կկորցնես սերը քո սեփա-

կան անձի հանդեպ, քանի որ բոլորին դուր գալով կնմանվես բոլորին... Այդ դեպքում կդառնաս ոչ ոքը:

Մարդիկ տարբեր են, ունեն տարբեր աշխարհայացք ու մտածելակերպ և տարբեր ընկալումներ շրջապատի նկատմամբ:

Մի՛ եղիր նա, ում բոլորը կսիրեն, եղի՛ր «դու», եղի՛ր տարբերվող, նա, ով կաս իրականում:

Մի՛ կենտրոնացիր արտաքինի վրա, այլ փորձիր գեղեցկացնել ներքին աշխարհիդ: Չէ որ դու մեղավոր չես բարակ շուրթերիդ, մեծ քթիդ, կամ կարճ հասակիդ ձևավորման համար, բայց դու, միայն դու ես պատասխանատու քո ներքին անձի ձևավորման համար, այն ինքդ ես կերտել:

Եի՛շտ տնօրինիր քեզ տրված 24 ժամը, խուսափիր ասել «ես ժամանակ չունեմ»: Չէ որ դու ունես այնքան ժամանակ, որքան որ ուներ դա Վինչին, Նապոլեոնը, Վան Գոգը, Միքելանջելոն և նրանք, ովքեր մեծ հետք են թողել...:

Սահմաններ դիր քո և բջջայինիդ միջև, այն օգտագործիր ըստ նպատակի և երբեք մի՛ կորցրու ժամանակի զգացողությունը:

Անդադար աշխատի՛ր ու ամեն բան արա՛ սիրով, բայց մի՛ մոռացիր քնել, ճաշել, թարմացնել քեզ ու հանգստանալ և հիշի՛ր, որ հանգստանալ, չի նշանակում հեռախոսի հետ միասին փռվել բազմոցին ու ավտոմատացված թերթել այն:

Ձրկի՛ր քեզ որոշ գվարձություններից, և երբ քեզ ընկերներդ կանչում են, սովորի՛ր ասել «ո՛չ», ասա դա առանց բացատրությունների: Ձրկե՛լով քեզ որոշ բաներից՝ դու կարող ես այդ թանկ ժամանակը ներդնել նպատակներիդ իրագործման մեջ:

Քո ձեռքում եղած ազատ ժամանակը բերրի հող է, որտեղ կարող է աճել ստեղծագործական միտքը ու պտուղներ տալ: Եվ հիշի՛ր, որ լավագույն ներդրումը ժամանակն է:

Շրջապատի քեզ հաջողակ ու մոտիվացնող մարդկանցով, օրինակ վերցրու նրանցից, բայց երբեք, երբեք մի՛ համեմատվիր նրանց հետ, այլ եղի՛ր տարբերվող ու յուրահատուկ մտածելակերպով օժտված անհատ:

Եղի՛ր պատասխանատու ինքդ քո առաջ...:

Երագի՛ր, նպատակ դիր քո առջև, հասի՛ր դրան քո հնարավորության սահմաններում:

Եվ ամենակարևորը՝ ժպտա՛ ու հավատա՛ քո ուժերին:

**Լուսինե Առաքելյան**

# ԻՄ ՊԱՐՏՔԸ ԵՄ ԿԱՏԱՌՈՒՄ



Հայրենիքին իրենց պարտքը կատարած տուն վերադարձան մեր համագյուղացիներ Արամայիս Ասատրյանը, Արտյոմ Աղաջանյանը և Տիգրան Մարտիրոսյանը, ովքեր ծառայեցին պատվով ու նվիրումով: Բարի վե-

րադարձ մեր տղաներին: Մեր համայնքից Հայոց բանակի շարքերը համալրելու են Սամվել Միքայելյանը և Էրիկ Խաչատրյանը: Մաղթում ենք նրանց խաղաղ ու անփորձանք ծառայություն:

# ԵԹԵ ԵՍ ԼԻՆԵՒ...

Եթե ես լինեի ԿԳ նախարար, առաջին հերթին դպրոցներում ուսուցնառությունը կդարձնեի տասնամյա: Եթե աշակերտը սովորող է լինում, նրա համար նշանակություն չունի, դպրոցը տասնամյա է, թե տասներկու: Եթե տասնամյա լինի, մեր ապագա գիտնականները կհասցնեն ինչպես որ կարգն է ավարտեն դպրոցը, նոր միայն կարողանան մտածել բանակ գնալու մասին: Իսկ եթե տասներկուամյա է, շատ աշակերտներ չեն հասցնում մասնակցել իրենց ավարտական երեկոյին, միանգամից գնում են բանակ:

Այնպես կանեի, որ դասարաններում երեխաները քիչ թվով լինեին, որպեսզի և՛ ուսուցչի աշխատանքը թեթև լիներ ու արդյունավետ, և՛ աշակերտի համար ընկալելի լիներ դասը: Առանց այն էլ ուսուցիչները աշխատանքը շատ ծանրաբեռնված է, նրանք ջանք ու եռանդ չեն խնայում, որ աշակերտները ստանան լիարժեք գիտելիքներ:



**Մարիբելյան Սոֆյա**  
Կցանկանայի, որ դպրոցներում կիրառեին այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտար աշակերտին ինքնահաստատման գործոնը կիրառելուն, ոչ թե նրան թևաթափ անելուն, քանի որ աշակերտը ունի իր սյուբեկտիվ կարծիքը և նրա վրա բռնաճալ չի կարելի, նրան ստիպել, որ որոշ առարկաներ պարտադիր պետք է ուսուցանվի: Ուզում եմ վերջապես արդարություն տիրի

Եվ այս բոլորի մասին որ երազում է, մի սովորական աղջնակ է...

**3**

### ԴԱՐՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՇԵՍՆԵՐԻ ԱՐՇԵՍ



պարզևատրել էր նրան. առանց ձեռքերն այրելու՝ նա քուրայից հանում էր կան-կարմիր երկաթը, հրակեզ մետաղը դնում ծնկներին (այն ժամանակ ոչ գնդան կար, ոչ էլ ունելի) և կռելով կոփում տաք ծուլվածքը:

Ինձ համար մեծ հպարտություն է, որ սերունդ են դարբինների ընտանիքից: Պապիկիս հայրը մեր գյուղի միակ դարբինն է եղել. պատվավոր մարդ և շնորհալի վարպետ: Այժմ էլ պապիկս է մեր գյուղի միակ դարբինը: Նա հնուտ վարպետ է, կարողանում է հնամաշ երկաթին նոր կյանք և շունչ պարգևել:

Դարբնությունը պատմական Հայաստանի ամենահին արհեստներից է:

Հայերիս համար դարբնությունը ուժի և զորության խորհրդանիշն է:

Ըստ Սողոմոն Իմաստունի՝ հնում ամենաբարձր տեղում նստելու իրավունք ուներ միայն դարբինը:

Դարբնությունը մեծ դեր է խաղացել հասարակության արտադրողական ուժերի զարգացման գործում:

Հայ վարպետները երկաթից կռել-պատրաստել են գյուղատնտեսական և աշխատանքային գործիքներ, զենքեր, տնային կահ-կարասի, զարդարանքի պարագաներ, բազմատեսակ անհրաժեշտ իրեր:

Ավանդության համաձայն՝ աշխարհում առաջին դարբինը եղել է Դավիթ մարգարեն: Իբրև արդարամիտ և անաչառ մարդ՝ Տերը

Պապիկս մեծ սիրով և նվիրումով է կատարում իր աշխատանքը՝ համարելով այն որպես ի վերուստ տրված առաքելություն:

-Դարբնագործության մեջ ամենակարևոր գաղտնիքը երկաթի հոգեվիճակը հասկանալն է,-ասում է պապս:

Ուրախալի է, որ այժմ պապիկս վարում է վարպետաց դասեր՝ նվիրված դարբնագործության առաջավոր փորձի փոխանցմանը:

Դասերի ընթացքում ես և հասակակիցներս ծանոթանում ենք դարբնության ավանդական մեթոդներին, տեխնոլոգիական նրբություններին, դարբնության արտադրությունում օգտագործվող գործիքներին, մշակվող նյութերի տեսակներին:

Աշխատելուն զուգընթաց պապիկս մանրամասն պատմում է դարբնության դերի, նշանակության, արդիականության և արհեստների արհեստ լինելու մասին:

Վանիկ Գրիգորյան

### ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ

Գեղարքունիք գյուղը գտնվում է Գեղարքունիքի մարզում, Գավառագետի ափին, մարզկենտրոնից 8 կմ հարավ, ծովի մակերևույթից 2075 մ բարձրության վրա: Գյուղը շրջապատված է Գեղամալեռներով: Ներկայիս բնակչության նախնիները այստեղ են գաղթել Ալաշկերտի, Բուլանդի և Սուշի գյուղերից:



Գյուղում գտնվում է Սբ. Գևորգ (17դ.) եկեղեցին: Գյուղի արևմտյան կողմում են գտնվում Սբ. Հակոբ մատուռը, կիլոլայան ամրոցը, «Չոր ավերակներ» բնակատեղին:


Պետությունում տիրող ներկայիս իրադրությունը նպաստեց, որ համայնքի բնակիչները մնան իրենց գյուղում և զիտակցեն, որ իրենք են պետության տերը, իսկ պետությունը կանգուն է իր ժողովրդով, այս դեպքում համայնքների բնակիչներով, ովքեր անմնացորդ նվիրվում են իրենց երկրին, տանը և գյուղին:

Այս ամենի հետ մեկտեղ գյուղում կան որոշակի խնդիրներ, որոնցից ամենակարևոր և գյուղի համար կենսական առաջնահերթ հարցը գյուղում աղբավայրի առկայությունն է, որը տարիներ շարունակ բազմաթիվ խնդիրներ է ստեղծել թե՛ բնակչության և թե՛ բնության համար պատճառելով հակասանիտարական և անհրապույր վիճակ: Չնայած այն բանին, որ Գեղարքունիք գյուղը վերջին տարիներին կնքել է պայմանագիր գյուղի աղբը տեղափոխելու վերաբերյալ, համայնքապետարանը

որոշել է «նոր» աղբը տեղափոխել պայմանագրով նախատեսված վայր, իսկ տարիներ շարունակ կուտակված աղբը թողնել նույն վայրում:

2020 թվականին Գեղարքունիքի համայնքապետարանի նոր կազմի նախաձեռնությամբ կատարվեց գյուղի «Աղյներ» կոչվող հանդամասում գտնվող աղբավայրի թաղման աշխատանքների առաջին փուլը, իսկ հետագայում կկատարվեն նաև երկրորդ շերտի տեղադրման և ծառատնկման, ինչպես նաև կանաչ գոտու ստեղծման աշխատանքներ:

Համայնքում առկա որոշ խնդիրներ ևս լուծվել են կատարվել են խնելու ջրի օրվա կարգավորիչ ջրավազանի մաքրման և քլորացման աշխատանքներ, ճանապարհների փոսալցման աշխատանքներ, ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհների հարթեցում: Կազմակերպվել է նաև ծառատունկ համայնքի «Գորոյ չըը» կոչվող հատվածում:



Աննա Գևորգյան

Բավական չէ իր Ազգի զավակը լինել, պետք է նաև հրաշունչ գինվորը լինել:  
**Գարեգին Նժդեհ**

**ԿՐԻՐ ԴԻՄԱԿ,  
ՓՐԿԻՐ  
ԿՅԱՆՔԵՐ**



«1+1» դպրոցական թերթի խմբագրությունը անցկացնում է մրցույթ կարճամետրաժ հետաքրքիր տեսաֆիլմերից /1 րոպե տևողությամբ/ «դու ինքդ ռեժիսոր ես» խորագրով: Տեսագրված ֆիլմերը կարող եք ուղարկել [zgorsever@gmail.com](mailto:zgorsever@gmail.com) հասցեին

**4** «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈՆԱ Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1 Փոստային դասիչ՝ 1207 Թողարկման օրը՝ 27. 07. 2020 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան  
Տպարանակր՝ 500  
Հեռախոս՝ 093919658:  
Էլ. փոստ՝ [roza.hakobyan.1975@mail.ru](mailto:roza.hakobyan.1975@mail.ru)  
Կայք էջ՝ [1b1.hmj](http://1b1.hmj)